ՀՐԱՉՅԱ ԱՍՄԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՌԵՄՈՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ

Արեւելյան Հայաստանի տարածքում 1918-1920 թթ. կազմավորվել էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը:

1915 թ. ապրիլյան Մեծ եղեռնից հետո Արեւմտյան Հայաստանը հայաթափվեց երիտթուրքերի կողմից. Թուրքիայում ապրող շուրջ երեք միլիոն արեւմտահայեր ջարդի ենթարկվեցին կամ սփռվեցին աշխարհով մեկ: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Գերմանիային դաշնակից Օսմանյան Թուրքիան եւս պարտվեց: Որոշվելու էր բաժանված աշխարհի տարածքները վերականգնելու հարցը: Անտանտի երկրների ներկայացուցիչները (Հայաստանը եւս նրանց դաշնակիցն էր) որոշեցին վերականգնել Հայաստանի Հանրապետության սահմանները, արեւմտահայության համար մի նոր օջախ ստեղծել Արեւմտյան Հայաստանի տարածքում եւ միավորել արեւելահայության հետ: Այս կապակցությամբ Իտալիան միջնորդի դերով հանդես եկավ Անտանտի երկրների եւ գերմանական խմբավորման միջեւ եւ Հյուսիսային Իտալիայի Սան-Ռեմո քաղաքում գումարվեց վեհաժողով, որտեղ քննարկվեցին Անտանտի հաղթող երկրների՝ Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի միջեւ նավթի բաժանման, ինչպես նաեւ Թուրքիայի տարածքները բաժանելու հարցերը:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Իտալիան նոր տարածքներ էր պահանջում Թուրքիայից, քանի որ իտալացիները դժգոհ էին 1916 թ. կողմերի միջեւ կնքված Սայքս-Պիկոյի դաշնագրից:

Վեհաժողովի աշխատանքին մասնակցել է Ճապոնիայից Մացուին, ամերիկյան ներկայացուցիչը եղել է դիտորդի դերում, իսկ հունական եւ բելգիական պատգամավորները մասնակցել են միայն այն ժամանակ, երբ քննարկվել են իրենց երկրների հետ կապված հարցեր:

Ինչ հարցեր էին առաջ քաշվում վեհաժողովում:

Ըստ էության Սան-Ռեմոյի վեհաժողովի[1] գլխավոր հարցը Մերձավոր Արեւելքի նավթի բաժանման հարցն էր: Այս կապակցությամբ 1920 թ. ապրիլի 24-ին իրար

1 Սան-Ռեմոյի (Իտալիա) վեհաժողովն սկսվել է 1920 թ. ապրիլի 18-ին՝ կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին Դեւաշան վիլլայում: Այդ օրը վեհաժողովի աշխատանքին մասնակցում էր բրիտանական կայսրությունից Դ. Լլոյդ Ջորջը՝ վարչապետ, Քեդլսթոնի կոմս Քերզոնը՝ արտաքին գործերի պետական քարտուղար, Մ. Հանքին, ֆրանսիական կողմից՝ Ա. Միլերանը՝ նախագահ, պարոն Բերտելոն: Իտալիայից՝ սինյոր Ֆ. Նիտտին՝ վարչապետ, դիվանագետներ Սցիալոյան, Գարբասսոն, Տրոմբետտին: Թարգմանիչ՝ պարոն Վարե: Մինչդեռ "История дипломатии" աշխատության երրորդ հատորում (М-Л., 1945), որի խմբագիրն է ակադ. Վ. Պ. Պոտյոմկինը, սխալմամբ գրված է, որ Սան-Ռեմոյի վեհաժողովի աշխատանքներն սկսվել են 1920 թ. ապրիլի 19-ին (երկուշաբթի):

հետ հանդիպեցին Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Բերտելոն եւ անգլիայի կայսերական նավթային ընկերության ղեկավար Քեդմանը: Նրանք ստորագրեցին նավթի վերաբերյալ մի համաձայնագիր, որը հաջորդ օրը վավերացվեց: Ըստ այդ համաձայնագրի՝ իրար միջեւ բաժանեցին Մերձավոր Արեւելքի, Ռումինիայի, անգլիական ու ֆրանսիական գաղութներին պատկանող նավթը: Աղոյուծի բաժինը հասավ Մեծ Բրիտանիային՝ Մոսուլի նավթը, իսկ Ֆրանսիան իրավունք ձեռք բերեց օգտվելու այդ տարածքի նավթի միայն 25 տոկոսից: Անգլիան Մոսուլի նավթը պետք է արտահաներ Սիրիայով ու Միջերկրական ծովով[2]:

Գերմանիայի ռազմական նախարարը 1920 թ. ապրիլի 20-ին դիմեց Սան-Ռեմոյի դաշնակիցների Գլխավոր խորհրդին՝ Վերսալի համաձայնագրով նախատեսված գերմանական սպաների եւ զինվորների թիվը գերմանական բանակում 100.000-ից ավելացնելու նպատակով: Գլխավոր խորհուրդը մերժեց նրան, բայց նշեց, որ չեն բռնազավթի Գերմանիայի տարածքը, կձգձգեն Գերմանիայի կողմից ռազմատուգանք վճարելու հարցը: Դաշնակիցները գերմանական կողմին հրավիրեցին բանակցությունների, որը տեղի ունեցավ Սպաայում 1920 թ. հուլիսին:

Սան-Ռեմոյի վեհաժողովին մասնակցում էին նաեւ Մեծ Բրիտանիայի դաշնակից Հունաստանն ու Ճապոնիան: Վեհաժողովին չէր հրավիրվել Խորհրդային Ռուսաստանը, քանի որ Անտանտի երկրների կողմից ճանաչված չէր:

Վեհաժողովում քննարկվում էին նաեւ երկրորդական՝ Բելգիային ու Հունաստանին, նաեւ Խորհրդային Ռուսաստանին վերաբերող հարցեր:

Հայկական հարցի քննարկման առիթով բանավեճ սկսվեց Անտանտի հաղթող երկրների ղեկավարների միջեւ, որոնք այդպես էլ համաձայնության չեկան եւ ոչ մի հստակ որոշում չկայացրին: Սան-Ռեմոյի վեհաժողովի վերաբերյալ պրոֆ. Ջոն Կիրակոսյանը հրատարակել է վեց փաստաթուղթ վեհաժողովի ժամանակ բրիտանական քարտուղարի գրի առած նոթերը: Փաստաթղթերը (անգլերենից հայերեն է թարգմանել պրոֆ. Վ. Դիլոյանը) նորովի են լուսաբանում Իտալիայի դրական վերաբերմունքը հայկական հարցի նկատմամբ:

Անտանտի երկրները Թուրքիայի տարածքները բաժանելու հարցում իրար միջեւ ունեին ընդհանրություններ եւ հակասություններ: Իտալիան դեռեւս 1917 թ. իր տարածքային պահանջներն էր առաջ քաշում. սկզբում ուզում էր Ֆիումը, որը հետո անկախացավ Ազգերի լիգայի հովանու ներքո: Չստանալով այդ տարածքը՝ Իտալիայի վարչապետ Օռլանդոն հեռացավ Ազգերի լիգայից, բայց երկրի ֆինանսական դժվարությունները նրան ստիպեցին դիմել ԱՄՆ եւ նա առանց աղմուկի վերադարձավ Ազգերի լիգայի նիստերին:

Վեհաժողովի առաջին նիստը նախագահում էր Ֆրանչեսկա Նիտտին (Իտալիա), մասնակիցում էին դիվանագետներ Սցիալոյան, Գարբասսոն, Տրոմբետտին: Նիստը սկսելուց առաջ Ֆ. Նիտտին կոնֆերանսի քարտուղարության թեկնածու է

2 Տե՛ս անդ, էջ 92:

առաջարկում իտալացի դիվանագետ Գարբասսոյին, քանի որ վերջինս փորձառու դիվանագետ էր եւ աշխատել էր վեհաժողովի ծրագրի եւ աշխատանքների ճիշտ կազմակերպման ուղղությամբ:

Այս կապակցությամբ Մերձավոր Արեւելք եւ Հայաստան էր այցելել ամերիկյան զեներալ Հարբորդը, որը կազմել էր Հայաստանին վերաբերող մի մանրամասն զեկուցագիր: Ըստ զեներալի՝ ամերիկյան մանդատը Հայաստանի համար գնահատվում էր մոտ «757 միլիոն դոլլար՝ 5 տարվա համար»: Եւ բացի այդ նախապես 50 հազարանոց զորք էր պահանջվում՝ իրագործելու «վիլսոնյան ծրագիրը»:

Այս ծրագիրը քննարկվեց ամերիկյան սենատում եւ մերժվեց (23 կողմ եւ 52 դեմ)՝ նկատի ունենալով սահմանների հեռավորությունը եւ ֆինանսական ծախսերը:

Սան-Ռեմոյում Հայկական հարցի քննարկմանը մասնակցել է արեւմտահայ քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշան:

Վեհաժողովում պատվիրակությունները նախ քննարկել են Հայաստանի ապագան, ապա այդ ժամանակվա հայկական տարածքի ստեղծման հարցը: Նրանք գտնում էին, որ պետք է արեւելահայերից եւ արեւմտահայերից կազմվի հայկական մի ամբողջական պետություն՝ միացյալ տարածքում: Այդ նորաստեղծ պետության անմիջական «կորիզը» պետք է լինի Երեւանի Հանրապետությունը՝ Ռուսաստանի հովանու ներքո եւ նրա տարածքում, քանի որ արեւմտահայերը 1915-1922 թթ. Մեծ եղեռնից հետո զրկվել էին իրենց բնօրրանից: Նաեւ Թուրքիային պատկանող տարածքից մի հատված պետք է տրվեր: Հայկական այդ պետությանը գոյատեւելու եւ սահմանները պաշտպանելու համար անհրաժեշտ էր ունենալ զինված ուժեր՝ հայոց բանակ: Անտանտի ոչ մի տերություն հանձն չի առնում հայոց բանակի ստեղծման եւ կազմավորման խնդիրը:

Անգլիայի վարչապետ Լ. Ջորջը մտահոգված էր, որ «մեծ տերությունների կողմից անազնիվ կլիներ թղթի վրա ստեղծել Նոր Հայաստան՝ չունենալով իրական մտադրություն պաշտպանելու երիտասարդ պետությունը»[3]:

Ինչպես իրավացիորեն նկատել են պրոֆեսորներ Ջոն Կիրակոսյանը եւ Ռուբեն Սահակյանը, «մանր դրամի դեր պետք է կատարեր Հունաստանն՝ Արեւմուտքում, իսկ Հայաստանը՝ Արեւելքում»[4]:

Հայկական Առաջին Հանրապետությունն ուներ ընդամենը 30 հազարանոց բանակ: Սակայն նոր ստեղծված բանակ պահելու եւ սպառազինելու համար անհրաժեշտ էին ֆինանսական միջոցներ, որ Հայաստանը չուներ: Այս կապակցությամբ կոնֆերանսում քննարկվում է Նորվեգիայի կողմից Հայաստանի մանդատը ընդունելու հարցը, քանի որ վերջինս դեմոկրատական երկիր էր եւ դուրս էր «եւրոպական քաղաքականության գլխավոր հորձանուտից»: Եթե վերջինս իր համաձայնությունը տար, հայկական ուժերը կարող էին հանդերձավորվել եւ վարժվել եւրոպական բա-

3 **Գ. Գալոյան**, Հայաստանը եւ Մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 222:

4 Տե՛ս **Ջ. Կիրակոսյան**, **Ռ. Սահակյան,** Սան-Ռեմոյի կոնֆերանսը եւ Հայաստանը, «ԲՀԱ», Եր., 1972, թ. 3, էջ 21:

նակի նմանությամբ: Հայաստանին առնչվող մյուս հարցը դեպի ծով ելք ունենալն էր եւ այն էլ՝ Բաթումով, Լազիստանով: Բաթումի հարցը, ինչպես գտնում էր Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարար Քերզոնը, մյուս պետությունների հետ համաձայնեցված էր. այնտեղ Հայաստանը կարող էր նավահանգիստ ունենալ:

Ինչ վերաբերում է «Լազիստանի ծովեզերքին», ապա վերջինս պետք է լիներ Հայաստանի համար ազատ նավահանգիստ:

Պարոն Միլերանին լորդ Քերզոնի հայտարարությունը մի փոքր լավատեսական էր թվում, քանի որ եւրոպական ուժերով ու ծախսերով Ֆրանսիան տվյալ պահին չէր կարող օգնել Հայաստանին: Նա ելնում էր իր սառը հաշվարկներից: Իտալիան եւս հրաժարվում է ռազմական միջոցներով օժանդակել Հայաստանին:

Սինյոր Ֆ. Նիտտին համակարծիք էր Ա. Միլերանին եւ գտնում էր, որ «Իտալիայի համար դրությունը ճիշտ եւ ճիշտ նույնն է»[5]: Հենվելով ճշգրիտ վիճակագրական տվյալների վրա՝ ինքը կասկածում էր, որ Հայաստանի մանդատը չէր կարող ընդունել: Նա գտնում էր, որ ուրախ կլինի, եթե Հայաստանի մանդատը ընդունի նաեւ Նորվեգիան, չնայած «ինքը շատ է կասկածում, որ Նորվեգիան իր վրա ռազմական պատասխանատվություն վերցնի» (էջ 617): Միաժամանակ մյուս երկրների ներկայացուցիչների հետ համաձայն է, որ Հայաստանի համար Բաթումի նավահանգիստը օգտագործվի: ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը կարծում էր, որ Հայաստանի քարտեզը բավականաչափ մեծ չի գծված, մինչդեռ Միլերանի կարծիքով՝ «Որքան մեծ ստեղծվեր, այնքան վատ հայերի համար»: Լլոյդ Ջորջը լիովին համամիտ էր Միլերանին. Մեծ Բրիտանիան նույնպես չէր կարող զորքով օգնել Հայաստանին:

Երկարատեւ քննարկումներից հետո Անտանտի երկրների վարչապետները եկան այն եզրակացության, որ «Հայաստան զորք չեն կարող ուղարկել»:

Ֆրանսիայի ներկայացուցիչը՝ պարոն Բերտելոն, նկատի ունենալով Նուբար փաշային, ակնարկում էր, որ կան հարուստ հայեր, ովքեր կարող են ֆինանսապես օգնել Հայաստանին:

Ելնելով դիվանագիտական սառը հաշվարկներից՝ որոշվել էր Հայաստան ուղարկել դաշնակից տերությունների ռազմական խորհրդի ներկայացուցիչներին՝ ստուգելու հայկական զորքերի հանդերձավորումը եւ քննարկելու Պողոս Նուբար փաշայի ներկայացրած «Թուրքիայում հայկական տարածքի ռազմական օկուպացումը» հուշագիրը:

Բաթումի հարցում եւս դիվանագետները հանգեցին այն համոզման, որ Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը պետք է համաձայնության գան: Բացի այդ, այնտեղ էր գտնվում անգլիական կայազորը, որը հսկողություն պետք է սահմաներ այդ նավահանգստի վրա: Այդ դեպքում Ֆրանսիան եւ Իտալիան չեզոք դիրք գրավեցին եւ չէին էլ կարող զինվորական զունդ ուղարկել այնտեղ: Այս հարցում դաշնակիցները համաձայնության եկան: «Բաթումը մնալու է մաս Վրաստանին, բայց դեպի այդ

5 Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբ., Եր., 1972, էջ 616: Այսուհետեւ էջերը կնշվեն տեքստում:

ազատ նավահանգիստը մուտք է երաշխավորվելու Հայաստանին եւ Աղրբեջանին» (էջ 620):

Իտալացի դիվանագետ Սցիալոյան իր հերթին պնդում էր, որ, չնայած Լոնդոնում Իտալիայի տված որոշ խոստումներին, իր երկրի համար դժվար է Հայաստան զորք ուղարկել:

Լորդ Քերզոնի կարծիքով թուրքական եկամուտները գալիս էին Կոնիայից, Սվասից, Անգորայից, Էրզրումից եւ Երզնկայից: Քերզոնը, համաձայնելով Լ. Ջորջի հետ, կարծում էր, որ Թուրքիային թուլացնելու համար անհրաժեշտ է «խեղդամահ» անել նրա մայրաքաղաքը: Սինյոր Նիտտին նույնպես համակարծիք էր անգլիացի դիվանագետներին. Թուրքիան, կտրվելով հիշյալ շրջաններից, շրջափակման մեջ կգտնվի ծովափնյա նավահանգիստներից, նրա նշանակությունը կփոքրանա:

Անտանտի բոլոր երկրների դիվանագետները գտնում էին, որ Զմյուռնիայի նավահանգիստը Թուրքիայի եկամուտների հիմնական աղբյուրն է, իսկ Էրզրումը Մուստաֆա Քեմալի մուսուլմանական շարժման գլխավոր օջախներից մեկն է:

Լ. Ջորջը կարծում էր, որ Թուրքիային կարելի է խեղճացնել այն դեպքում, երբ նրանից գրավվի Թրակիան, Զմյուռնիան, Հայաստանը, նեղուցները, Հյուսիսային Սիրիան եւ Միջագետքը (տե՛ս էջ 627): Սակայն այս շրջանները բռնագրավելու համար 19 դիվիզիա է անհրաժեշտ (անդ), որն այդ պահին չունեին դաշնակիցները:

Նրանք պնդում էին նաեւ, որ Հայաստանին դեպի ծով ելք տալու համար անհրաժեշտ է բանալ Տրապիզոնի նավահանգիստը: Սինյոր Նիտտին նույնպես ընդունում էր, որ այդ առումով Հայաստանը գտնվում է «շատ դժվարին դրության մեջ» (էջ 631):

1920 թ. ապրիլի 22-ին (Պողոս Նուբար փաշան ներկա էր նիստի միայն երկրորդ կեսի վերջին մասի քննարկմանը)՝ հինգշաբթի օրը, կայացած նիստում Լ. Ջորջը նշում էր, որ Հայաստանի տարածքը «կարող է այդ ժամանակամիջոցին դրվել Ազգերի լիգայի հովանու ներքո» (էջ 647): Սինյոր Նիտտին երկմտում էր. արդյո՞ք Հայաստանը իր նոր սահմանները պաշտպանելու համար հնարավորություն ունի «եւ ցանկանո՞ւմ է նա, որպեսզի Էրզրումը ընդգրկվի այդ սահմաններում»: Եւ արդյո՞ք կարող է վերակառուցել իր բանակը եւ «միջոցառումներ ձեռնարկել նոր պետության ստեղծման համար» (էջ 651): Պողոս Նուբար փաշան հաստատում է. «Ինքը կասկած չունի, որ հայերը կարող են հաստատվել Էրզրումում եւ ամրապնդել իրենց դիրքերը այնտեղ» (անդ): Նա հիշեցնում է դիվանագետներին, որ հայերը ֆրանսիական լեգեոնին օգնելու նպատակով մեկ գումարտակ են տրամադրել, որ կռվել է Ֆրանսիայում, Պաղեստինում եւ այլուր ու զոհվասանքի են արժանացել զորքերի հրամանատար ֆելդմարշալ լորդ Ալենբիի կողմից: Հայերը կռվել են նաեւ ռուսների հետ, եւ վերջիններիս հեռանալուց հետո հայերի «ուսերին է մնացել պատերազմի ողջ բեռը» (անդ): Պողոս Նուբար փաշան գտնում էր, որ եթե հայերը զենք, զինամթերք եւ հանդերձանք ունենան, դրանից կշահեն քաղաքակիրթ ազգերը: Միաժամանակ Պողոս Նուբար փաշան կարծում էր, որ 5000-ից մինչեւ 10000 ամերիկացի հայ կամավորներ պատրաստ են «իսկույն եւեթ Կիլիկիա մեկնելու»:

Սինյոր Նիտտիի այն հարցապնդմանը, թե «ներկայումս որքա՞ն հայեր կան Էրզրումում» (էջ 652), Պողոս Նուբար փաշան պատասխանում է, որ թեեւ մեծ թվով հայեր սպանվել են, կոտորվել կամ տարագրվել, բայց եթե վաղը Էրզրումը կրկին հայկական դառնա, Կիլիկիայից բոլոր հայերը եւ նրանք, ովքեր աքսորվել կամ տեղահանվել են, իսկույն կվերադառնան այնտեղ (անդ):

Սինյոր Նիտտիին հետաքրքրում է, թե արդյո՞ք հայերը փոքրաթիվ ուժերով կարող են դիմակայել եւ «կանխել ապագա կոտորածները»:

Հարցի քննարկումն ընդհատվեց երեկոյան ժամը 7-ն անց 20 րոպեին եւ շարունակվեց հաջորդ օրը՝ ապրիլի 23-ին: ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը, որը հայամետ դիրք ուներ, գտնում էր, որ Հայաստանը առանց Էրզրումի եւ Տրապիզոնի գոյություն ունենալ չէր կարող (էջ 661): Հայերի համար ծով դուրս գալու միակ ելքը Տրապիզոնն էր:

Վեհաժողովում առաջ է քաշվում նաեւ Հայաստանին մի հզոր պետության կողմից ռազմական եւ տնտեսական օգնություն ցույց տալու հարցը: Եթե չիրագործվեն այդ կանխատեսումները, կհիմնվի միայն «Փոքր Հայաստան»՝ ներկայիս սահմաններով:

Լ. Ջորջը ճշմարտության դեմ չմեղանչելու համար շատ զգուշորեն նկատում էր, որ Մեծ Հայաստանի ստեղծումը «Վատ զգացմունքներ առաջ կբերի Հնդկաստանի եւ ողջ աշխարհի մահմեդականների մեջ» (էջ 664):

Վերջին նիստին՝ 1920 թ. ապրիլի 24-ին, որ զուգադիպում էր Հայոց Մեծ եղեռնի հնգամյա տարեդարձին, մասնակցում էին նաեւ Մացուին, Սատտոն, Սավադան՝ ճապոնիայից:

Սինյոր Նիտտին հիշեցրեց, որ հաջորդ ամսի 10-ին թուրքերը հրավիրվում են Փարիզ՝ Հայկական հարցը նորից քննարկելու եւ եզրակացության գալու նպատակով: Լ. Ջորջը իրավացիորեն պնդում էր, որ Էրզրումի հարցը պետք է քննարկել Միացյալ Նահանգների Նախագահի հետ եւ ընդունել նրա որոշումը: Նա պնդում էր նաեւ, որ «Հայաստանը ելք կունենա դեպի ծով» (էջ 667):

Կիլիկիայի հարցը եւս մեծ տերությունների ներկայացուցիչները դիվանագիտական խողովակներով անցկացրին ու գործնական քայլերի չդիմեցին, ինչպես այն եղավ Մեծ Հայաստան ստեղծելու հարցում:

Ավելի պարզորոշ Անտանտի դիվանագետների կարծիքը բացահայտում է Քերզոնին Գեդդեսի (Վաշինգտոնում անգլիական դեսպան- Հ.Ա.) հեռագիրը, որը ստացվել էր 1920 թ. ապրիլի 30-ին: Դրանից երեւում էր, որ Մեծ Բրիտանիայի համար շատ ավելի կարեւոր են ասիական նավթահանքերը, քան հայ ժողովրդի տարածքների հարցը:

Սան-Ռեմոյի վեհաժողովը նպաստեց, որ 1920 թ. ապրիլի 23-ին ԱՄՆ կառավարությունը «դե ֆակտո» ճանաչի Հայաստանի անկախ Հանրապետությունը:

Սան-Ռեմոյի վեհաժողովի ընդունած որոշումները չիրագործվեցին քեմալական շարժման պատճառով: Ինչպես նշում են պրոֆ. Ջ. Կիրակոսյանը եւ Ռ. Սահակյանը, «դեռեւս 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսում թուրքական պառ-

լամենտն ընդունեց Թուրքիայի անկախության հռչակագիրը՝ «Ազգային ուխտը», որը բանաձեւեց 1919 թ. հուլիս-սեպտեմբերին Էրզրումի եւ Սվասի համագումարների ծրագրային հարցադրումները, քեմալական ազգայնական պայքարի նպատակներն ու ծրագրային դրույթնե-րը, որտեղ առաջին պլան էր մղվում թուրքական տարածքների ամբողջականությունը փրկելու ծրագիրը»[6]:

Էրզրումի համագումարի որոշման հենց առաջին կետում ընդգծվում էր Անատոլիայի վեց վիլայեթներում, այսինքն՝ Արեւմտյան Հայաստանում, հայկական իշխանության ստեղծումը կանխելու անհրաժեշտությունը: Ինքը՝ Մ. Քեմալը անհանրին էր համարում գեթ մի թիզ հող հանձնել Հայաստանին կամ որեւէ այլ պետության եւ ասում էր. «Մենք կապրենք կամ կկործանվենք Ազգային ուխտի հետ միասին»[7]:

Արդ, Սան-Ռեմոյի կոնֆերանսում հայկական հարցի քննարկումը եւրոպական մեծ տերությունների կողմից առաջընթաց չարձանագրեց: Սան-Ռեմոյին հաջորդեց Սեւրի պայմանագիրը:

Ուշագրավ է նաեւ այն հանգամանքը, որ Սան-Ռեմոյի կոնֆերանսի ավարտից հետո՝ 1920 թ. ամռանը, Փարիզում հիմնադրվեց «Արմենոֆիլ» մի կոմիտե, որի կազմում գործում էին ԱՄՆ, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Շվեյցարիայի, Հունաստանի, Դանիայի, Նորվեգիայի հասարակական առաջադեմ գործիչները: Կոմիտեի աշխատանքները ղեկավարում էր Վիկտոր Բերարդը: Կոմիտեի գործունեության նպատակն էր ամբողջ առաջադեմ մարդկությանը ծանոթացնել հայերի եւ Հայկական հարցի հետ: Դրանից հետո առավել եւս մեծացավ եւրոպացիների հետաքրքրությունը այդ հարցի նկատմամբ:

Միաժամանակ միջազգային հարաբերությունների բարդ իրավիճակը, եւրոպական երկրներում ղեկավարների փոփոխությունը եւս նպաստեցին եւ օգնեցին Թուրքիային չիրագործելու նշված պայմանագիրը:

6 **Ջ.Կիրակոսյան, Ռ.Սահակյան**, նշվ. աշխ.:
7 Անդ, 20: